

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 7

Խնճի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Զեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տախս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1 Ո՞ր բույսն ունի նեցուկային արմատներ.

- 1) բանիանը
- 2) այգածաղիկը
- 3) խոլորձը
- 4) լոբին

2 Ո՞րը տերևի ձևափոխություն չէ.

- 1) վիկի բեղիկները
- 2) մորու բեղիկները
- 3) ծորենու փշերը
- 4) ծաղիկի առէջները

3 Ո՞ր բույսի ծաղիկները չունեն պսակ.

- 1) հիրիկի
- 2) ճականեղի
- 3) շքանարգիզի
- 4) գնարբուկի

4 Ո՞ր բույսերի սերմերում է զարգացած էնդոսպերմը.

- 1) ցորենի և հովկամախաղի
- 2) սեխի, լոբու և եռագույն մանուշակի
- 3) գորտնուկի և հովտաշուշանի
- 4) սոխի և հովկամախաղի

5 Ինչպե՞ս են զարնանը դեպի բնափայտ, կեղև և նոր բացվող բողբոջներ տեղաշարժվում օրգանական նյութերի պաշարները.

- 1) կամքիումի բջիջների բաժանման միջոցով
- 2) լուրի բջիջների ակտիվացման շնորհիվ
- 3) վերնանաշկի բջիջների ակտիվացման շնորհիվ
- 4) միջուկային ճառագայթների բջիջներով

6 Հողաքափիկ ինֆուզորիան սննդի չմարսած մնացորդները ինչպե՞ս է հեռացնում մարմնից.

- 1) բերանի անցրով
- 2) կծկուն վակուոլով
- 3) արտազատական վակուոլով
- 4) արտազատական անցրով

7 Ի՞նչ բաժիններ են տարրերում պլանարիայի մարսողական համակարգում.

- 1) բերան, կլան, կերակրափող, կտնառք, աղիք
- 2) բերան, կերակրափող, ստամոք, աղիք, կոյանոց
- 3) բերան, առջևի, միջին, հետին աղիքներ, հետանցք
- 4) բերանային անցք, կլան, փակ ծայրով ավարտվող աղիք

(79-80) Մարդու 10 ժամ արքուն և հարաբերական հանգստի վիճակում է եղել, իսկ 5 ժամ ֆիզիկական աշխատանք է կատարել, որի ընթացքում շնչառական շարժումների հաճախականությունը մեծացել է 1,5 անգամ, իսկ ներշնչած օդի ծավալը՝ 1,2 անգամ:

79 Հաշվել այդ ընթացքում օգտագործված օդի ծավալը (լիտր):

8 Անձրևորդի արտաքրորդայան օրգանները յուրաքանչյուր հատվածում տեղավորված մեկ գույզ ձագարած խողովակներ են, որոնք.

- 1) լայն բացվածքով գտնվում են մարմնի խոռոչում, իսկ նեղը՝ հարևան հատվածից բացվում է դուրս
- 2) մի ծայրով փակ են, իսկ հիմքերով բացվում են աղիքի մեջ
- 3) սեռական ծորաններին միացած բացվում են դուրս
- 4) մի ծայրով հաղորդակցվում են մարմնի խոռոչի հետ, իսկ մյուսով բացվում են աղիքի մեջ

9 Երկկենցաղների գլխուղեղի ո՞ր բաժինն է ավելի վատ զարգացած ձկների համեմատ.

- 1) միջին ուղեղ
- 2) ուղեղիկ
- 3) երկարավուն ուղեղ
- 4) առջևի ուղեղ

10 Թռչունների քների բարձրացման հիմնական դերը պատկանում է.

- 1) միջկողային մկաններին
- 2) ճիշտ են պատասխաններ 1-ը և 4-ը
- 3) ենթանրակային մկաններին
- 4) կրծքային մեծ մկաններին

11 Մարդու գլխուղեղի ո՞ր բաժինն է կարգավորում պաշտպանական ռեֆլեքսների իրականացումը.

- 1) միջին ուղեղը
- 2) միջանկյալ ուղեղը
- 3) երկարավուն ուղեղը
- 4) կամուրջը

12 Ի՞նչ չեն իրականացնում մարդու գլխուղեղի կամքջի նեյրոնները.

- 1) կապը երկարավուն ուղեղի, ուղեղիկի և մեծ կիսագնդերի միջև
- 2) վերջույթների մկանների և մաշկի նյարդավորումը
- 3) գլխի դիմային մկանների նյարդավորումը
- 4) գեղձերի հյութազատության կարգավորումը

13 Մարդու ո՞ր հորմններն են բարձրացնում գլուկոզի քանակն արյան մեջ.

- 1) ինսուլինը և աղրենալինը
- 2) թիրօքսինը և ինսուլինը
- 3) ինսուլինը և գլյուկագոնը
- 4) գլյուկագոնը և աղրենալինը

14 Մարդու գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի ո՞ր քիլըն է ընդունում կիսարուր խողովակների մազակազմ բջիջներում առաջացած նյարդային ազդակները.

- 1) ճակատային
- 2) քունքային
- 3) ծոծրակային
- 4) գագաթային

15 Ո՞ր պնդումը չի համապատասխանում մարդու ցանցաթաղանքի կառուցվածքին.

- 1) ցուպիկները գույները չեն տարբերում
- 2) ցանցաթաղանքում սրվակներն ավելի շատ են և օժտված են բարձր լուսազգայությամբ
- 3) ցանցաթաղանքն ունի երկու տեսակի լուսընկալիչներ
- 4) ցանցաթաղանքում ցուպիկներն ավելի շատ են և օժտված են բարձր լուսազգայությամբ

16 Ինչպե՞ս են իրար միացած մարդու ստորին վերջույթների կմախքի ուսկորները.

- 1) միայն շարժուն
- 2) շարժուն և անշարժ
- 3) շարժուն և կիսաշարժուն
- 4) կիսաշարժուն և անշարժ

17 Որտե՞ղ է գտնվում մարդու սրտի ինքնավարությունը պայմանավորող բջիջների խումբը.

- 1) կիսալուսնածև փականներում
- 2) փորոքները բաժանող միջնապատում
- 3) աջ նախասրտի պատում
- 4) աջ փորոքում՝ թոքային ցողունի ելքի մոտ

18 Ո՞ր պնդումն է սխալ մարդու արյան վերաբերյալ.

- 1) պլազմայում գտնվում են α և β ագլյուտինիներ
- 2) ագլյուտինիները և ագլյուտինոգեները պայմանավորում են արյան 4 խմբերը
- 3) երիթրոցիտների մակերեսին գտնվում են A և B ագլյուտինոգեներ
- 4) երիթրոցիտների մակերեսին գտնվում են α և β ագլյուտինիներ

19 Մարդու գլխուղեղի ո՞ր բաժինն է ապահովում շնչառական շարժումների կամային կարգավորումը խոսելու ընթացքում.

- 1) ուղեղիկի կեղևը
- 2) միջանկյալ ուղեղը
- 3) երկարավուն ուղեղը
- 4) ծայրային ուղեղի կեղևը

20 Մարդու ո՞ր օրգաններում են սինթեզվում սալիտակուցներ ճեղքող ֆերմենտներ.

- 1) լյարդում, ստամոքսում, ենթաստամոքսային գեղձում
- 2) ստամոքսում, բարակ աղիներում, լյարդում
- 3) ստամոքսում, թքագեղձերում, ենթաստամոքսային գեղձում
- 4) ստամոքսում, բարակ աղիներում, ենթաստամոքսային գեղձում

21 Ի՞նչ է դիտվում մարդու օրգանիզմում B<sub>2</sub> թերվիտամինոզի դեպքում.

- 1) տեսողության խանգարում, բերանի լորձաթաղանքի ախտահարում
- 2) ռախիտ, մկանային ցավեր
- 3) արյունազեղումներ, հավկուրություն
- 4) սիրտ-անոքային և նյարդային համակարգերի աշխատանքի խանգարում

(77-78) Մարդկանց կատարակտը և բազմանատությունը ժառանգվում են որպես առոտոսմային դոմինանտ շղթայակցված հատկանիշներ և միասին չեն տալիս վերահամակցված ձևեր:

77 Կինը, որը հորից ժառանգել էր երկու արատներն էլ, իսկ մայրը նշված հատկանիշներով առողջ էր, ամուսնանում է առողջ տղամարդու հետ: Ինչպիսի՞ հավանականությամբ (արտահայտված տոկոսներով) այդ ընտանիքի հաջորդ երեխան կարող է ունենալ երկու արատներն էլ:

78 Տղամարդը, որը կատարակտը ժառանգել էր հորից, իսկ բազմանատություն՝ մորից, ամուսնանում է առողջ կնոջ հետ: Ինչպիսի՞ հավանականությամբ (արտահայտված տոկոսներով) այդ ընտանիքի հաջորդ երեխան կարող է ունենալ երկու արատներն էլ:

(74-76) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացավ 36 մոլ CO<sub>2</sub> և 270 մոլ H<sub>2</sub>O:

74 Քանի՞ մոլ կաթնաթրու է մնացել այդ ընթացքում:

22 Մարդու երիկամի նեֆրոնում մազանոթային քանի՞ ցանց կա և որտե՞ղ է տեղակայված.

- 1) երիկամային խողովակները պատող մազանոթների մեկ ցանց
- 2) մազանոթների մեկ ցանց, որը պատում է միաժամանակ պատիճը և երիկամային խողովակները
- 3) պատիճի խոռոչում գտնվող մազանոթների մեկ ցանց
- 4) պատիճի խոռոչում գտնվող և ոլորուն խողովակները պատող մազանոթային երկու ցանց

23 Ի՞նչն է հանդիսանում անեղություն սեռական բազմացման նկատմամբ.

- 1) ծնողների սեռական բջիջներում առաջացած մուտացիաները սերունդներին փոխանցելու հնարավորությունը
- 2) ծնողների սոմատիկ բջիջներում առաջացած մուտացիաները սերունդներին փոխանցելու հնարավորությունը
- 3) մուտացիաների ավելի մեծ քանակը
- 4) սերունդների գենետիկական բազմազանության բարձրացումը

24 Պլազմային թաղանթի նորացումը կատարվում է.

- 1) միտոքոնդրիումների գործունեության արդյունքում
- 2) ներառուկների գործունեության արդյունքում
- 3) լիզոսումների գործունեության արդյունքում
- 4) Գոլցիի ապարատի գործունեության արդյունքում

25 Էներգիայի արտաքին աղբյուր չի պահանջում.

- 1) ջրի տեղաշարժը թաղանթի միջով
- 2) ֆագոցիտոզի գործընթացը
- 3) գլյուկոզից օլիկոգենի առաջացման գործընթացը
- 4) մկանային կծկումը

26 Նախակորիզավոր բջիջների կազմի մեջ մտնում են.

- 1) միայն ԴՆԹ
- 2) միայն Ո-ՆԹ
- 3) ԴՆԹ և Ո-ՆԹ
- 4) կամ ԴՆԹ, կամ Ո-ՆԹ

27 Որտե՞ղ է տեղի ունենում ջրածնի ատոմների օքսիդացումը գլյուկոզի թթվածնային ճեղքման ընթացքում.

- 1) քլորոպլաստների ներքին թաղանթներում
- 2) միտոքոնդրիումների ներքին թաղանթում
- 3) ցիտոպլազմայում և Գոլցիի ապարատում
- 4) միտոքոնդրիումների արտաքին թաղանթում

28 Ֆուսուխնթեզի մքնային փուլում տեղի է ունենում.

- 1) ջրի ֆոտոլիզ (քայլայում)
- 2) ածխաթրու գազի անջատում
- 3) ԱԵՖ-ի սինթեզ
- 4) ածխաթրու գազի կապում (յուրացում)

29

**Որո՞նք են պլաստիկ փոխանակության օրինակները.**

- 1) ֆոտոսինթեզը, քեմոսինթեզը և գլիկոլիզը
- 2) նիտրիֆիկացումը, քեմոսինթեզը, սպիտակուցի կենսասինթեզը
- 3) նիտրիֆիկացումը և սպիրտային խմորումը
- 4) քեմոսինթեզը և շնչառությունը

30

**Ցանկացած բջջում առկա են.**

- 1) ցիտոպլազման, պլազմային թաղանթը, ոիքոսումները
- 2) պլաստիդները, միտոքոնդրիումները, ոիքոսումները
- 3) ցիտոպլազման, կորիզը, ոիքոսումները
- 4) լիզոսումները, բջջային կենտրոնները, ներառուկները

31

**Ո՞ր օրգաններն են սաղմնային զարգացման ընթացքում առաջանում մեզոդերմից.**

- 1) զգայարանները, նյարդերը, բոքերը, արյունը
- 2) արյունը, գլխուղեղը, լսողության օրգանները
- 3) մկանները, ոսկրերը, երիկամները, սեռական գեղձերը
- 4) մկանները, նյարդերը, աղիքները, երիկամները

32

**Ինչպիսի՞ գենոտիպեր են ունեցել ծնողները, եթե այդ ընտանիքում բոլոր տղա երեխաները դալտոնիկ են, իսկ աղջիկները՝ դալտոնիզմի գենը կրողներ են.**

- 1)  $X^D X^D$  և  $X^D Y$
- 2)  $X^d X^d$  և  $X^D Y$
- 3)  $X^D X^d$  և  $X^d Y$
- 4)  $X^D X^d$  և  $X^D Y$

33

**Ի՞նչ ճեղքավորում է ստացվում երկինտերոզիզուտ առանձնյակների խաչասերման արդյունքում՝ երկու ակելով էլ ոչ լրիվ դոմինանտության դեպքում.**

- 1) գենոտիպային և գենոտիպային ձևերի հավասար քանակ
- 2) գենոտիպային ձևերի ավելի մեծ քանակ գենոտիպային ձևերի նկատմամբ
- 3) 9:3:3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի
- 4) 9:3:3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի

34

**Ինչպես են կոչվում ձվարանի բազմացման գոտում ձևավորվող բջիջները.**

- 1) օվոգնիումներ
- 2) ուղղորդող մարմնիկներ
- 3) երկրորդ կարգի օվոցիտներ
- 4) առաջին կարգի օվոցիտներ

35

**Հնարավո՞ր է արդյոք առանձնյակի գենոտիպի որոշումը, որում ֆենոտիպորեն դրսևը կունենա դեմքի հատկանիշը.**

- 1) ոչ՝ ոչ լրիվ դոմինանտության դեպքում
- 2) ոչ՝ լրիվ դոմինանտության ցանկացած բնույթի դեպքում
- 3) ոչ՝ լրիվ դոմինանտության դեպքում
- 4) այո՛ դոմինանտության ցանկացած բնույթի դեպքում

**(71-73) Գենում ցիտոզինային նուկլեոտիդի քանակը 1102 է, որը կազմում է նուկլեոտիդների ընդհանուր թվի 38%-ը, իսկ մեկ ամինաթրվի երկարությունը աղլիպեպտիդային շղայի երկարությանը կազմում է 0,36 նանոմետր:**

71

**Զանի՞ նուկլեոտիդներից է բաղկացած ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը, որը կոդավորում է տվյալ սպիտակուցի մոլեկուլը.**

- 1) 5800
- 2) 2900
- 3) 2204
- 4) 1450

72

**Ինչպիսի՞ երկարություն ունի տվյալ գենով կոդավորվող սպիտակուցի առաջնային կառուցվածքը.**

- 1) 174,24
- 2) 173,88
- 3) 164,56
- 4) 164,22

73

**Ինչքա՞ն ժամանակում (վրկ) բջջում կսինթեզվի տվյալ սպիտակուցը, եթե մեկ ամինաթրվի միացումը կատարվում է 0,2 վրկ-ում.**

- 1) 193,2
- 2) 193,4
- 3) 96,4
- 4) 96,6

68

**Ո՞ր շաբասմ են նշված բոլոր սխալ պնդումները.**

- A. արուները և էգերը տարբերվում են միայն մեկ զոյց գեներով, որոնք պայմանավորում են այս կամ այն սեռի պատկանելիությունը և շղթայակցված են առտոսումային քրոմոսոմների հետ
  - B. իգական օրգանիզմը զարգանում է այն գամետից, որի ձևավորման ժամանակ մեյոզի առաջին բաժանման պրոֆազում, տրամախաչման արդյունքում, իգական սեռը պայմանավորող երկու X գեները հայտնվում են մեկ շղթայակցման խմբում
  - C. օրգանիզմի սեռը որոշվում է իմմնականում զիգոտի քրոմոսոմային հավաքակազմով
  - D. հոմոգամետ են այն օրգանիզմները, որոնցում ձևավորվում են մաքուր գամետներ
  - E. հետերոգամետ են այն օրգանիզմները, որոնցում ձևավորվում են երկու տեսակի գամետներ, որոնք կրում են X- կամ Y-քրոմոսոմ և առտոսումներ
  - F. հոմոգամետ են այն առանձնյակները, որոնք ձևավորում են մեկ տեսակի՝ X-քրոմոսոմ և առտոսումներ կրող գամետներ
- 1) BCEF
  - 2) CDEF
  - 3) ABE
  - 4) ABD

- (69-70) Խաչասերել են AaBbCCddEe x AabbccDdEE գենոտիպերով առանձնյակներին: Ազելային գեների առաջին երեք զոյցերում առկա է լրիվ դրմինանտություն, իսկ վերջին երկուսում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զոյցերում:

69

**Գտնել սերմում հնարավոր գենոտիպերի թիվը.**

- 1) 16
- 2) 24
- 3) 54
- 4) 36

70

**Գտնել սերմում հնարավոր ֆենոտիպերի թիվը.**

- 1) 16
- 2) 24
- 3) 54
- 4) 36

36

**Ինչի՞ն չի կարող հանգեցնել ռեակցիայի լայն նորման բնական պայմաններում.**

- 1) տեսակի ծաղկմանը
- 2) լայն հարմարվողականությանը
- 3) տեսակի պահպանմանը
- 4) հարմարվողականության փոքրացմանը

37

**Ի՞նչ է բնորոշ գենային մուտացիաներին.**

- 1) առաջանում են մեյոզի երկրորդ բաժանման պրոֆազում քրոմոսոմների տրամախաչման հետևանքով
- 2) առաջանում են ԴՆԹ-ում նուկլեոտիդների հաջորդականության փոփոխության հետևանքով
- 3) առաջանում են խաչասերման արդյունքում
- 4) առաջանում են մեյոզի առաջին բաժանման պրոֆազում քրոմոսոմների տրամախաչման հետևանքով

38

**Ո՞ր բույսը մակարույծ չէ.**

- 1) գաղձը
- 2) սարացենիան
- 3) օմելան
- 4) ռաֆիեզիան

39

**Ինչպիսի՞ հարաբերությամբ AaBb, aaBb, Aabb, aabb գենոտիպով առանձնյակներ կստացվեն, եթե խաչասերենք AaBb x AaBb գենոտիպերով առանձնյակներ.**

- 1) 1:1:1:1
- 2) 1:2:1
- 3) 3:1
- 4) 4:2:2:1

40

**Որո՞նք են (որն է) ռուկիմենտներ(ը).**

- 1) գորտի առջևի վերջույյթները
- 2) ձիերի եռամատ վերջույյթները
- 3) մարդու հաստ աղին
- 4) մարդու երրորդ կոպը

41

**Ո՞ր խմբին են պատկանում ազոտֆիքսող բակտերիաները.**

- 1) առաջին կարգի կոնսումենտների
- 2) երկրորդ կարգի կոնսումենտների
- 3) ռեդուցենտների
- 4) պրոդուցենտների

42

**Ո՞ր բնութագիրն է համապատասխանում կոմենսալիզմին.**

- 1) փոխհարաբերվող երկու տեսակներն են ստանում օգուտ, սակայն դրանց համատեղ գոյությունը յուրաքանչյուր տեսակի համար անհրաժեշտ պայման չէ
- 2) փոխհարաբերվող տեսակներից ոչ մեկը օգուտ չի ստանում
- 3) փոխհարաբերվող երկու տեսակն էլ ստանում են օգուտ և հանդիսանում է դրանց գոյության համար անհրաժեշտ պայման
- 4) փոխազդող երկու տեսակներից միայն մեկն է օգուտ ստանում

43 Թվարկված օրգաններից որո՞նք են հոմոլոզ.

- 1) ծորենու և պլոմենու փշերը
- 2) կարտոֆիլի պալարները և եղիճի կոճղարմատները
- 3) թռչունների, ջղիկների և միջատների թևերը
- 4) խլորդի և իշախառանչի փորող վերջույթները

44 Ինչպիսի՞ն կարող են լինել տեսակներն ըստ կենսաքիմիական չափանիշի.

- 1) էնդեմիկ
- 2) կոսմոպոլիտ
- 3) կրկնորդ
- 4) երկվորյակ

45 Կենսոլորտի ո՞ր բաղադրիչներից է հողը.

- 1) կենսահաճային նյութ է
- 2) հանքային նյութ է
- 3) կենդանի նյութ է
- 4) կենսածին նյութ է

46 Ո՞րն է առանձնյակներին մեկ պոպուլացիայի մեջ միավորող գլխավոր պայմանը.

- 1) միանման կերի օգտագործելը
- 2) սեռահասուն և ոչ սեռահասուն առանձնյակների որոշակի հարաբերությունը
- 3) առանձնյակների՝ միմյանց նման լինելը
- 4) առանձնյակների՝ միմյանց հետ ազատ խաչասերման արգելմերի բացակայությունը

(47-48) Ծածկասերմ բույսի առեջներից մեկում առաջացել է 1000000 փոշեհատիկ:

47 Քանի՞ վեգետատիվ բջիջ են նրանք պարունակում.

- 1) 2000000
- 2) 4000000
- 3) 500000
- 4) 1000000

48 Քանի՞ սպերմիումներ են նրանք պարունակում.

- 1) 2000000
- 2) 4000000
- 3) 500000
- 4) 1000000

66 Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պատասխանները.

- A. նոյն տեսակին պատկանող, սակայն որոշ ձևաբերություններ ունեցող առանձնյակները միավորվում են «կրկնորդ տեսակների» խմբում
- B. հիմնվելով միայն գենետիկական չափանիշի վրա՝ հնարավոր է կանխորշել տեսակը
- C. առանձնյակների խաչասերվելու ընդունակությունը և բեղուն սերունդ ունենալը վկայում են բոլոր դեպքերում նրանց նոյն տեսակի պատկանելության մասին
- D. առանձնյակների միայն քրոմոսոմների քանակի, չափի և ձևի հիման վրա հնարավոր է տեսակի առանձնացումը
- E. նոյն տեսակին պատկանող առանձնյակների քրոմոսոմների քանակը, չափսերը կամ ձեր մուտացիաների հետևանքով կարող են փոփոխվել
- F. նոյն տեսակին պատկանող առանձնյակների գենոտիպերը նոյնն են
  - 1) ABCDF
  - 2) BCDF
  - 3) ACDEF
  - 4) BCD

67 Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները.

- A. համակցական փոփոխականությունը դրսևորվում է սերունդների գենոտիպում
- B. համակցական փոփոխականության հիմքում ընկած են գեների կառուցվածքային փոփոխությունները
- C. համակցական փոփոխականությունը միայն մեյօփի երկրորդ բաժանման անաֆազի գործընթացների արդյունք է
- D. բեղմնավորման ժամանակ զամետների պատահական զուգակցման գործընթացն ընկած է համակցական փոփոխականության հիմքում
- E. մեյօփի ընթացքում քրոմոսոմների տրամախաչումը չի կարող առաջացնել քրոմոսոմային մուտացիա
- F. միևնույն ծնողների երեխաների գենոտիպային և ֆենոտիպային բազմազանությունն արդյունք է համակցական փոփոխականության
- G. համակցական փոփոխականության առաջացմանը նպաստում է բազմակի ալելների առկայությունը
  - 1) DEF
  - 2) BCE
  - 3) ACD
  - 4) BEG

64

**Ո՞ր շաբում են նշված բոլոր սխալ պնդումները.**

- A. թթվածնային քաղցի պայմաններում որոշ բակտերիաների բջիջներում և կաթնասունների մկաններում իրականացվող խմորման պրոցեսների նմանությունը կայանում է մեծ քանակությամբ ածխաբթու գազի և կաթնաբթվի առաջացման մեջ
  - B. խմորասմկերում խմորման արդյունքում առաջանում են սպիրու, կաթնաբթու, ԱԵՖ և ածխաբթու գազ
  - C. ածխաջրերի թթվածնային ճեղքման պրոցեսում թթվածնի դերը կայանում է ներքին բաղանքի էլեկտրոն-փոխադրիչ համակարգով փոխադրված էլեկտրոնների միացման մեջ
  - D. օքսիդային ֆուֆորիլացման պրոցեսում թթվածինն անմիջականորեն մասնակցում է կաթնաբթվի օքսիդացման ռեակցիային
  - E. օրգանական նյութերի ճեղքումը և բջջային կառույցների քայրայումն իրականանում է կորիզի և Գոլցի ապարատի անմիջական մասնակցությամբ
  - F. լիսիդները մասնակցում են մարդու մակերիկամների հորմոնների կենսափոխեցին
- 1) CDF  
2) ABDE  
3) ACDF  
4) ABC

65

**Ո՞ր շաբում են նշված բոլոր սխալ պնդումները.**

- A. դուստր բջիջներում քրոմոսոմների թվի բազմապատիկ անգամ փոփոխությունը կոնյուգացիայի արդյունք է
  - B. միտոնի արդյունքում կարող են առաջանալ զեների նոր համակցություններ
  - C. հոմոլոգ քրոմոսոմները տարամիտվում են մեյօզի առաջին բաժանման անաֆազում
  - D. սնկերը էուկարիոտ օրգանիզմներ են, որպես պաշարանյութ կուտակում են գլյուկազոն
  - E. սնկերը սնվում են պատրաստի օրգանական նյութերով, արտազատում են միզանյոթ
  - F. սնկերի բջիջների բջջապատի հիմնական նյութը խիտինն է
  - G. սնկերն ավտոտրոֆ օրգանիզմներ են
- 1) BCDE  
2) AEFG  
3) ACDF  
4) ABDG

(49-50) Ծագանակագույն աչքեր պայմանավորող գենը դրսինանուում է երկնագույն աչքեր պայմանավորող գենի նկատմամբ, իսկ ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, երբ ծնողներից մեկն ունենում է գանգուր մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ, և այդ հատկանիշները ժառանգվում են առտոստմային չշղթայակցված գեներով: Ծագանակագույն աչքերով և ալիքաձև մազերով ծնողների առաջին երեխան ուներ երկնագույն աչքեր և ալիքաձև մազեր:

49

**Գտնել երկնագույն աչքերով և ուղիղ մազերով երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.**

- 1) 1\8  
2) 1\2 կամ 1\4  
3) 1\4  
4) 1\16

50

**Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունեն ծնողները.**

- 1) AaBb  
2) AABB, AaBB, AABb կամ AaBb գենոտիպներից որևէ մեկը:  
3) AABb  
4) AaBB կամ AABb

51

Թվարկված ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) արմատի ձևափոխության ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) է բնորոշ: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

Բնութագիր

- A. առաջացմանը մասնակցում են գլխավոր արմատը և ցողունի ստորին մասը
- B. առաջանում է հիմնականում երկամյա բույսերի մոտ
- C. չեն առաջանում գլխավոր արմատից
- D. արմատի ձևափոխությունը զոյանում է կողային և հավելյալ արմատներում պաշարանյութեր կուտակելու արդյունքում
- E. արմատի ձևափոխությունը բնորոշ է գեղրգենուն և այգածաղկին
- F. արմատի ձևափոխությունը բնորոշ է գազարին և ճակնդեղին

- 1) A-2, B-1, C-2, D-2, E-1, F-2
- 2) A-2, B-2, C-1, D-2, E-2, F-1
- 3) A-1, B-2, C-1, D-1, E-1, F-1
- 4) A-1, B-1, C-2, D-2, E-2, F-1

52

Բջջի ո՞ր օրգանոիդին (նշված է աջ սյունակում) ո՞ր ֆունկցիան (նշված է ձախ սյունակում) է համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

Ֆունկցիա

- A. ժառանգական տեղեկատվության պահպանում և հաղորդում
- B. պլազմային թաղանթի նորոգում ու աճ
- C. սպիտակուցի կենսասինթեզ
- D. մասնակցություն բաժանման իլիկի ձևավորմանը
- E. լիզոսմների ձևավորում
- F. անօրգանական նյութերից օրգանական նյութերի սինթեզ
- G. պաշարային սննդանյութերի կուտակում

- 1) A-1, B-2, C-4, D-3, E-4, F-4, G-5
- 2) A-1, B-4, C-2, D-5, E-4, F-3, G-3
- 3) A-1, B-2, C-3, D-4, E-3, F-5, G-5
- 4) A-2, B-4, C-1, D-3, E-4, F-5, G-5

62

Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. ծղրիդի, սենյակային ճանճի, աղավնու, փայտոցիլի արուներն ունեն մեկ սեռական բրոնսոսն
  - B. համաձայն Թ.Մորգանի՝ պտղաճանճի երկինտերոզիզոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում սերնդում կստացվի չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
  - C. մեկ բրոնսոսում կան բազմաթիվ գեներ
  - D. մեկ բրոնսոսի գեների խումբն անվանում են շղթայակցված խումբ
  - E. շղթայակցված խմբերի թիվը հավասար է բրոնսոսների դիպլոիդ թվին
  - F. մեկ բրոնսոսի գեներն առավելապես ժառանգվում են միասին՝ շղթայակցված
  - G. գեների շղթայակցումը բացարձակ չէ
  - H. բոչունների մոտ առկա է արական հետերոզամետուրյուն
- 1) BCFG
  - 2) CDEH
  - 3) ABEH
  - 4) CDFG

63

Ո՞ր շարքում են նշված բջջակորիզի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

- A. բրոմատինը ԴՆԹ-ի, հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների համալիր է
  - B. բրոմատինի հիստոնային սպիտակուցները հարուստ են արգինին և լիզին ամինաթթուների մնացորդներով, ինչը այդ սպիտակուցներին տալիս է բրվային հատկություններ
  - C. կորիզակները ձևավորվում և մանրադիտակի տակ տեսանելի են դառնում միայն բաժանվող բջիջներում
  - D. կորիզարաղանքում առկա խոշոր ծակոտիններն ապահովում են սպիտակուցների, ածխաջրերի, լիզիների, ոլիբոնուկենաթթուների, ջրի և զանազան իոնների կորիզից ցիտոպլազմա և հակառակ ուղղությամբ տեղափոխումը
  - E. կորիզարաղանքի արտաքին թաղանթը պատված է ոլիբոնումներով և Գոլզիի ապարատի և էնդոպլազմային ցանցի խողովակների հետ առաջացնում է ընդիանուր համակարգ
  - F. կարիոպլազման բրոնսոսների ներքին միջավայրն է
- 1) ADF
  - 2) BCF
  - 3) ADE
  - 4) BDE

60

Ի՞նչ է բոլոր մարդու վեգետատիվ նյարդային համակարգին: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- վեգետատիվ նյարդային համակարգը կարգավորում է ներքին օրգանների գործունեությունը և կմախրային մկանների աշխատանքը
- վեգետատիվ նյարդային համակարգը բաղկացած է սիմպաթիկ և պարասիմպաթիկ բաժիններից, որոնք իրականացնում են ներքին օրգանների աշխատանքի կարգավորումը
- սիմպաթիկ նյարդային համակարգի կենտրոնական բաժինը տեղակայված է ողնուղեղի պարանոցային վերջին, կրծքային և գոտկային հատվածների գորշ նյութի կողմնային եղջյուրներում
- վեգետատիվ նյարդային համակարգի նեյրոնների արտնները միելինազուրկ են և նյարդային գրգիռը դրանցով արագ է հաղորդվում
- պարասիմպաթիկ նյարդային համակարգի կենտրոնները գտնվում են երկարավուն, միջին ուղեղում և ողնուղեղի սրբանային հատվածի գորշ նյութի կողմնային եղջյուրներում
- սիմպաթիկ բաժնի գրգորումը լայնացնում է աչքի բիբը
- վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժնի գրգորումն ակտիվացնում է լեղու արտադրությունը

61

Որո՞նք են մարդու լողական վերլուծիչի բաժինները: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- արտաքին ականջը, զլխուղեղի կիսազնդերի քունքային բլթում գտնվող լողական կենտրոնը, ներքին ականջի կիսաբոլոր խողովակները
- լողական նյարդը, լողական ոսկրիկները և ներքին ականջի կլոր և ձվաձև պարկիկները
- ներքին ականջի խխունջի ձվաձև պատուհանի թաղանթը, կիսաբոլոր խողովակները
- լողական նյարդը
- ներքին ականջի խխունջում տեղադրված մազանման բջիջները
- մեծ կիսազնդերի կեղևի քունքային բլթում գտնվող լողական գոտին
- ներքին ականջի խխունջում գտնվող մազանման բջիջները և միջին ուղեղը

- DEG
- BCF
- ACD
- DEF

53

Կրկնակի բեղմնավորման արդյունքում բույսի ծաղկի ո՞ր նասից (նշված է ձախ մասում) ի՞նչ է զարգանում (նշված է աջ մասում): Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- |  |                |
|--|----------------|
| A. զիգոտից   | 1. սերմը       |
| B. սաղմնապարկից  | 2. պտուղը      |
| C. վարսանդից   | 3. սերմնանաշկը |
| D. սաղմնապարկի պատից                                       | 4. պտղապատը    |
| E. սերմնարանի պատից  | 5. սերմի սաղմը |
| F. կենտրոնական բջիջը և սպերմիումներից<br>մեկի միաձուլումից | 6. էնդոսպերմը  |

- A-5, B-1, C-2, D-3, E-4, F-6
- A-5, B-5, C-6, D-1, E-1, F-6
- A-5, B-1, C-2, D-4, E-4, F-1
- A-6, B-2, C-3, D-6, E-3, F-1

54

Բաժանման ո՞ր պլոցեսը (նշված է ձախ սյունակում) բջջի բաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված էն աջ սյունակում) է համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

#### Բաժանման պլոցես

- հոմոլոզ քրոմոսոմները դասավորվում են մեկ հարթության վրա՝ կողք կողքի
- տեղի է ունենում ցիտոպլազմայի բաժանում, ձևավորվում են դիպլոիդ բջիջներ
- հոմոլոզ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց
- սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, տեղի է ունենում հոմոլոզ քրոմոսոմների կոնյուգացիա և տրամախաչում
- ցենտրիուլները տարամիտվում են դեպի տարրեր ընեղներ, սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, հոմոլոզ քրոմոսոմներն առանձին-առանձին են
- հապլոիդ թվով երկրրումատիդային քրոմոսոմներն ապապարուրվում են

#### Բջջի բաժանման ձև և փուլ

- միտոզի մետաֆազ
- միտոզի պրոֆազ
- մեյօզի առաջին բաժանման մետաֆազ
- միտոզի թելոֆազ
- մեյօզի առաջին բաժանման թելոֆազ
- մեյօզի առաջին բաժանման պրոֆազ

- A-1, B-4, C-2, D-6, E-2, F-5
- A-3, B-2, C-1, D-6, E-4, F-5
- A-2, B-4, C-5, D-1, E-6, F-3
- A-1, B-4, C-3, D-6, E-2, F-5

55

Ի՞նչպիսի՞ն է արյան հաջորդական ուղին ձկների արյունատար համակարգում՝ սկսած սիրտ մտնելու պահից: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. դեպի սիրտ տանող երակներ
  - B. փորային առրտա
  - C. մեջքային առրտա
  - D. նախասիրտ
  - E. խոհկային թերթիկների մազանոքներ
  - F. ներքին օրգանների մազանոքներ
  - G. փորոք
- 1) DGBECFA
  - 2) DGBEFCA
  - 3) GBCEFAD
  - 4) DGEBCFA

56

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆազով բակտերիայի վարակման ժամանակ: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. բակտերիաֆազի ԴՆԹ-ի ներարկում բակտերիայի մեջ
  - B. պոչային ելունների ամրացում քջաբաղանթին
  - C. բակտերիաֆազի սպիտակուցների սինթեզ
  - D. քջաբաղանթի «լուծում»
  - E. նոր բակտերիաֆազերի ձևավորում
  - F. բակտերիաֆազի ԴՆԹ-ի սինթեզ
  - G. բակտերիայի ոչնչացում
- 1) BDAFCEG
  - 2) BADFCEG
  - 3) BDGFACE
  - 4) BDFACEG

57

Ի՞նչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց ֆենոտիպում արտահայտվելը: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. նուկլեոտիդների երկու զույգի փոխարինում
  - B. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
  - C. ըստ մուտանտ գենի հոմոզիգոտ ձևի առաջացում
  - D. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
  - E. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
  - F. ռեցեսիվ մուտացիայի տարածում
  - G. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
- 1) ABFGCDE
  - 2) AEFCGDB
  - 3) ABDFGCE
  - 4) BDAFCGE

58

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ֆազոցիտոզի ժամանակ: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. ներփրկած հատվածում պլազմային թաղանթի եզրերի մոտեցում
  - B. պլազմային թաղանթի ներփրում
  - C. բշտիկի անջատում պլազմային թաղանթից
  - D. կլանված նյութով բշտիկի առաջացում
  - E. կլանման ենթակա նյութի հպում պլազմային թաղանթին
  - F. լիզոսմի միաձուլում՝ առաջացած բշտիկի հետ, և մարտղական վակուոլի ձևավորում
- 1) EACFDB
  - 2) EDBCFA
  - 3) EBADCF
  - 4) BACDEF

59

Ո՞ր պնդումն է ճիշտ աղեխորշավորմերի համար: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. բազմաբջիջ են, ունեն մարմնի խոռոչ և երկլողմանի համաշափություն
  - B. բազմաբջիջ, եռաշերտ կենդանիներ են, ունեն մարմնի ճառագայթային համաշափություն
  - C. երկշերտ կենդանիներ են, ունեն մարմնի ճառագայթային համաշափություն
  - D. մարմնի պատը բաղկացած է էկտոդերմից և էնտոդերմից, որոնք բաղկացած են միևնույն ֆունկցիա իրականացնող տարրեր տիպի քիչներից
  - E. մարմնի պատը բաղկացած է յուրահատուկ ֆունկցիա կատարող տարրեր քիչներից
  - F. էկտոդերմի կազմի մեջ մտնում են մաշկամկանային, խայթող և նյարդային քիչներ, իսկ էնտոդերմի կազմի մեջ՝ գեղձային, մտրակավոր և միջակա քիչներ
  - G. էկտոդերմի կազմի մեջ մտնում են մաշկամկանային, խայթող, նյարդային և միջակա քիչներ, իսկ էնտոդերմի կազմի մեջ՝ գեղձային, մտրակավոր, ամեռածն քիչներ
- 1) ADG
  - 2) BEF
  - 3) CEG
  - 4) CDG